ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/19

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.07.2017թ. թիվ 04/27-1/12457-17 գրությամբ «Սիսիանի ճանշին» ՍՊԸ-ին և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 27.06.2017թ. թիվ 08/15.3/11424-17 գրության հիման վրա, 10.07.2017թ. թիվ 04/27-1/12457-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Սիսիանի ճանշին» ՍՊԸ-ին և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.06.2017թ. թիվ 08/15.3/11424-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման նպատակով «ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի և «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ Կոնսորցիումի միջև 2015թ. դեկտեմբերի 21-ին կնքված թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20 ծածկագրով պայմանագրի կողմ հանդիսացող Կոնսորցիումի անդամ «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ-ն չի կատարել 18.11.2015թ. կնքված կոնսորցիումի պայմանագրի և համաձայն այդ պայմանագրի 2016թ. ապրիլի 1-ին կնքված համաձայնագրով նախատեսված ճանապարհահատվածների ընթացիկ ամառային պահպանման աշխատանքները.

Միջպետական նշանակության ավտոճանապարհներ՝

• Ա/Ճ Մ-13՝ Մ2-Անգեղակոթ-Նախիջևանի սահման կմ 0+000 – կմ 2+000 (2.0 կմ) Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ,

• Ա/Ճ Հ-45՝ Մ2-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի կմ 0+000 – կմ 26+350 (26.35 կմ):

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20 պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի պահանջներով՝ 2017 թվականի հունիսի 26-ից պայմանագիրը միակողմանի լուծվել է»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչներ Կարեն Գասպարյանը և Գուրգեն Թադևոսյանը:

3. «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ-ի և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Խորհուրդը դիմել է «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ-ին և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2017թ. Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերությունների դիրքորոշումը, սակայն վերջիններիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Էրիկ Պողոսյանը:

4. ՍՑ-ԷՍ-2017/19 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2017թ. թիվ 04/27-1/12457-17 գրությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.06.2017թ. թիվ 08/15.3/11424-17 գրությունը, Պատվիրատուի՝ «Սիսիանի ճանշին» ՍՊԸ (այսուհետ՝ նաև Գործընկեր 1) և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ (այսուհետ՝ նաև Գործընկեր 2) կոնսորցիումին (այսուհետ՝ Կոնսորցիում) ուղղված 26.06.2017թ. թիվ 08/15.3/11404-17 գրությունը, Պատվիրատուի և Կոնսորցիումի միջև 21.12.2017թ. կնքված N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20» ծածկագրով պետական գնման պայմանագիրը, «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ-ի և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի միջև 18.11.2015թ. կնքված՝ «Համատեղ գործունեություն

իրականացնելու մասին» համաձայնագիրը և 01.04.2016թ. կնքված՝ «Համատեղ գործունեության 18.11.2015թ. կնքված համաձայնագրում լրացումներ կատարելու մասին» համաձայնագիրը, Պատվիրատուի հայտնած կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել և 32-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ կոնսորցիումը:

Պատվիրատուի և «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ կոնսորցիումի միջև 21.12.2017թ. կնքվել է N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է նույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև 31.12.2020թ. ներառյալ:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

«Սիսիանի Ճանշին» ՍՊԸ-ի և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի միջև 18.11.2015թ. կնքված՝ «Համատեղ գործունեություն իրականացնելու մասին» համաձայնագրի 3.1 կետով սահմանվել է, որ նույն համաձայնագրի կողմերը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» ծածկագրով մրցույթը հաղթելու դեպքում կկնքեն լրացուցիչ պայմանագիր «Կապալի մասին», որտեղ կնշվեն յուրաքանչյուրի բաժնեմասերն՝ ինչպես քանակային, այնպես էլ գումարային ծավալները:

Ընկերությունների միջև 01.04.2016թ. կնքված՝ «Համատեղ գործունեության 18.11.2015թ. կնքված համաձայնագրում լրացումներ կատարելու մասին» համաձայնագրի 1.1.1 կետի համաձայն՝ գնման գործընթացում ընտրված մասնակից ճանաչվելու արդյունքում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի հետ կնքվող N«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1» Պայմանագրով 2016թ. նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով Գործընկեր-1-ն իրականացնում է.

Հայաստանի Հանրապետության Սիսիանի տարածաշրջանի ավտոճանապարհների ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներ՝

Միջպետական նշանակության ավտոճանապարհներ՝

- Ա/Ճ Մ-13՝ Մ2-Անգեղակոթ-Նախիջևանի սահման կմ 0+000 – կմ 2+000 (2.0 կմ)

Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ՝

- Ա/Ճ Հ-45՝ Մ2-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի կմ 0+000 – կմ 26+350 (26.35 կմ):

Նույն համաձայնագրի 1.1.2 կետի համաձայն՝ Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել մինչև 01.04.2017թ.:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը Ընկերություններին ուղղված 26.06.2017թ. թիվ 08/15.3/11404-17 գրությամբ հայտնել է, որ աշխատանքների կատարման պայմանագրի կողմ հանդիսացող Կոնսորցիումի անդամ «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ-ն չի կատարել 18.11.2015թ. կնքված կոնսորցիումի պայմանագրի և համաձայն այդ պայմանագրի 2016թ. ապրիլի 1-ին կնքված համաձայնագրով նախատեսված ճանապարհահատվածների ընթացիկ ամառային պահպանման աշխատանքները.

Միջպետական նշանակության ավտոճանապարհներ՝

- Ա/Ճ Մ-13՝ Մ2-Անգեղակոթ-Նախիջևանի սահման կմ 0+000 – կմ 2+000 (2.0 կմ)

Հանրապետական նշանակության ավտոճանապարհներ

- Ա/Ճ Հ-45՝ Մ2-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի կմ 0+000 – կմ 26+350 (26.35 կմ):

Միաժամանակ, նույն գրությամբ Պատվիրատուն Ընկերություններին ծանուցել է, որ N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-20» պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ 2017թ. հունիսի 26-ից պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված:

Պայմանագրի միակողմանի լուծման մասին հայտարարությունը 26.06.2017թ.հրապարակվել է տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ կոնսորցիումը կնքել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ աշխատանքների գնման պայմանագիր, սակայն չի կատարել Պայմանագրով նախատեսված աշխատանքները, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Խորհուրդը գտնում է, որ «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ կոնսորցիումը պայմանագրով նախատեսված աշխատանքը սահմանված ժամկետում չկատարելով՝ խախտել է Պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ-ին և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ-ին և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2017թ. «Սիսիանի Ճանշին» ՍՊԸ-ին և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**